Արամ Իսաբեկյան

ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, պրոֆեսոր, Երեւանի գեղարվեստի ակադեմիայի ռեկտոր

Կյանք եւ մշակույթ

Առաջին հերթին սիրտ պետք է ունենաս

ռում, դրա համար էլ կա անհանդուրժողականություն, կա նախանձ, հատկապես արվեստագետների շրջանում:

- Դուք չե՞ք նախանձում:

- Ընդհանրապես, նախանձի բոլոր արտահայտությունները խորթ են ինձ համար: Ես չեմ սիրում նախանձի եւ ոչ մի դրսեւորում:

- Ո՞րն է արվեստի խնդիրը:

- Գեղեցիկի ձգտումը եւ դա՝ ամեն ասպարեզում:

- Իսկ ո՞րն է այդ գեղեցիկը:

- Այսօր գեղեցիկի չափանիշերը փոխվել են: Առաջ՝ Հին Հունաստանի կամ Վերածննդի ժամանակաշրջանում շատ պարզ էր, թե որն է այդ գեղեցիկը: Արվեստի չափանիշերը փոխվել են, դրա համար պետք է լինի բազմաճաշակություն, չի կարող լինել մի ճաշակ բոլորի համար: Մեզ նաեւ ուժեղ դաստիարակություն է պետք, դեռ փոքրուց դպրոցում պետք է լինեն մշակույթի դասեր: Երիտասարդը, ով ավարտում է դպրոցը, պետք է իմանա արվեստի բոլոր իզմերը, որպեսզի կարողանա ընտրել արվեստն իր մեջ գաղտնիք ունի, չկա արվեստ առանց մտքի: Նատյուրմորտն էլ պետք է միտք ունենա: Թվում է, թե չունի, գույներ են միայն, բայց ոչ, ունի:

- Ո՞վ կարող է մարդուն արվեստագետ կոչել:

- Իր ստեղծած արվեստն իրեն իրավունք է տալիս կոչվելու արվեստագետ: Արվեստագետը պետք է առաջին հերթին լինի արդար ինքն իր հետ: Եթե ինքդ քեզ հետ արդար լինես, շատ մեծ հաջողությունների կհասնես: Երբեմն ասում են՝ վատ բժիշկ լինելն է վտանգավոր, վատ իրավաբան լինելը, բայց շատ վնաս է նաեւ վատ արվեստագետ լինելը: Հետաքրքիր է նաեւ այն, որ այդ միջակությունները շատ պայքարող են լինում: Շատ հիանալի արվեստագետներ գիտեմ, որ չունեն իրենք իրենց գովազդելու ունակությունը: Այստեղ էլ տեսնում եք, որ դեռ չի ձեւավորվել մենեջերի աշխատանքը, ավելի շատ ծանոթը ծանոթին կամ էլ ինքն իրեն սկզբունքն է գործում:

- Վերնիսաժում տեսնու՞մ եք լուրջ գործեր:

- Ոչ, չեմ տեսնում: Ոչ մի լուրջ նկարիչ չի կարող գնալ վերնիսաժ: Դրանք ինքնանպատակ են: Դրանք ինքնանպատակ են: Դրանք ինքնանպատակ են

- Մշակութային աշխույժ կյանք կա՞ Հայաստանում:

- Իհարկե կա, եթե ունենք Օպերա, Ֆիլհարմոնիա, Ազգային պատկերասրահ, ցուցասրահներ, եւ դրանք բոլորն էլ աշխատում են, գործում, նշանակում է՝ մշակութային կյանք կա: Ուրիշ բան, որ մշակույթի համար հատկացվող գումարները քիչ են, մշակութային քաղաքականությունը կազմավորված չէ, շատ մշակութային իրադարձություններ ինքնահոսի են տրված: Ցուցահանդեսների մի մասը, որ կայանում է այսօր, հիմնականում անհատների գործն է, ինչն այդպես չպետք է լինի: Իհարկե, այս ամենի կողքին կան դրական տեղաշարժեր:

- Որո՞նք են այդ դրական տեղաշարժերը:

- Ես մեր ակադեմիայի օրինակը կբերեմ, հավատացնում եմ ձեզ, որ 12 տարի առաջ այն մի ավերակ էր: Բայց եթե այսօր տեսնեք, թե մեր բուհն այս տարիների ընթացքում ինչ առաջընթաց է ունեցել, կարող եք մտածել, թե սա բարգավաճ երկրում է եղել: Բայց դրա հետ մեկտեղ բոլոր շրջանավարտները, ովքեր արվեստի բուհերն են ավարտում, վստահ չեն, որ աշխատանք կգտնեն Հայաստանում: Արդեն եկել է ժամանակը, որ պետությունը մտահոգվի, եւ արվեստագետն իրեն այստեղ էլ լավ զգա:

- Պետական աջակցությունը, ֆինանսական ներդրումները մշակույթի զարգացման գործում կարեւո՞ր նախապայման են:

- Կարող ենք այդպես ասել, բայց նաեւ պետք է հասկանանք, որ Հայաստանը իր 15 տարվա անկախության շրջանում բազում խնդիրներ է ունեցել եւ դեռ ունի, այսինքն՝ պատճառներն այսօր շատ են, որ շեշտը չդրվի մշակույթի վրա: Այս ամենի հետ, նայում ես, տեսնում, որ քիչ բան չի արվում, բայց, իհարկե, դեռ շատ բաներ կան անելու: Այսօր հիմնականում մեզ թողած ժառանգությունն ենք դեռ մաշում:

- Մշակութային հզոր ժառանգություն ունեցող ազգ մեզ կարո՞ղ ենք համարել:

- Մենք միշտ ենք եղել հզոր, եւ փոքրիկ Հայաստանը համաշխարհային մշակույթում իր տեղն ունի, եւ դա միայն մենք չենք ասում: Այնպիսի գեղանկարչություն ունենք, որ պատիվ կբերեր ցանկացած ազգի: Հայաստանը մշակույթի երկիր է եւ լինելու ուրիշ ճանապարհ չունի: Միայն թե Հայաստանում ապրող արվեստագետն ավելի մեծ դժվարություններ ունի համաշխարհային մշակույթում ներկայանալու եւ այնտեղ իր տեղը գրավելու համար:

- Հայաստանում երիտասարդ արվեստագետներն ի՞նչ հեռանկարներ ունեն:

- Եթե սպասեն, որ ինչ-որ տեղից ինչ-որ բան կփոխվի, լինեն անտարբեր, ապա ոչինչ էլ չի փոխվի:

- Ակտիվություն տեսնու՞մ եք հայ երիտասարդների մեջ:

- Տեսնում եմ, բայց ոչ շատ: Ավելի շատ տեսնում եմ, որ այդ ակտիվներն էլ իրենց անձնական հարցերն են ուզում լուծել: Դա, իհարկե, լավ է, բայց ընդհանուրի համար այդ բանը չկա: Մենք անհատների երկիր ենք եւ զարմանալի է, որ դա դեռ չի փոխվել: Դա զգացվում է բոլոր ասպարեզներում:



Փարավոն Միրզոյանի դիմանկարը, 1997

կալել այն, ինչն իրենից արժեք է ներկայացնում:

- Այսինքն՝ արվեստը զգալու համար նախեւառաջ պետք է պատրաստ լինես այն հասկանալու՞:

- Իհարկե, մարդը պետք է ունենա իմացություն, որպեսզի գնահատելու հնարավորություն ունենա, իսկ դրանից հետո նաեւ զգա:

- Ի՞նչ է անհրաժեշտ ստեղծագործելու համար:

- Առաջին հերթին սիրտ պիտի ունենաս, համապատասխան նյարդային համակարգ, մնացածը ածանցյալ բաներ են: Արվեստն ընդհանրապես այն բնագավառն է, ուր կարող ես խաբել մեկ-երկու տարի, բայց դրանից հետո նա ես, ինչ կաս: Արվեստում պետք է ավելի շատ արդարություն լինի: Լավ ժում նստել եւ իր գործերը վաճառել, դա բացառվում է: Վերնիսաժում ինչ ասես կարող է լինել, բայց չեմ հավատում, որ կարող է այնտեղ Վան Գոգ լինել, որովհետեւ երբեք այդ Վան Գոգը, Դեգան կամ Միքելանջելոն վերնիսաժում չեն նստել: Արվեստագետը կարող է մի քիչ տառապել, մի քիչ վատ ապրել, բայց իր ստեղծագործությունը հանի եւ սպասի, թե բախտը կբերի՞: Վերնիսաժին դեմ չեմ, թող լինի, բոլոր քաղաքներում էլ կան նման վայրեր, բայց դրա մասին լուրջ խոսելը ես համարում եմ մի քիչ անլուրջ:

- Այդ տառապանքը, նյութական դժվարությունները ինչպե՞ս են ազդում արվեստագետի վրա:

- Ցանկացած մարդ, ինչքան էլ լավ ապրի, միեւնույն է, այդ տառապանքներն ունենում է: Օրինակ՝ Սեզանը բանկիրի տղա էր՝ հարուստ ընտանիքից, բայց իր կյանքում շատ է տառապել, այսինքն՝ այդ զրկանքները միայն նյութականի հետ չեն կապված: Հիմարություն է նաեւ այն խոսքը, թե արվեստագետը պիտի աղքատ լինի: Արվեստագետների 90 տոկոսն այն ժամանակ էլ, հիմա էլ հարուստներ են եղել, պատվերներ են կատարել ու շատ մեծ գումարներ վաստակել:

- Արվեստում քոնն ասելու համար քի՞չ է շնորհալի մարդ լինելը:

- Մարդ, իհարկե, պետք է լինի աստվածաշնորհ, բայց դրա վրա անպայման պետք է ավելացնի ահավոր մեծ աշխատասիրություն, առանց դրա հնարավոր չէ:

- Համբերությունն արվեստում տեղ ունի՞:

- Անպայման, չհամբերեցիր, կարող ես եւ գժվել, կարող ես ուլոր է:

- Ինքնադիմանկարներն ի՞նչ խորհուրդ ունեն նկարչի համար:

- Ինքնադիմանկարները մի քանի բացատրություն ունեն: Առաջինը՝ երբ չունես բնորդ, ամենահեշտ բանը ինքդ քեզ նկարելն է: Այդ ժամանակ է, որ համբերությամբ նայում ես ինքդ քեզ ու խնդիրներ լուծում, տիրապետում նկարչական տեխնիկային: Իսկ երբ արդեն գալիս է այն ժամանակը, որ մարդն իսկապես կարողանում է նկարել իրեն, այ դա ուրիշ բան է: Նայենք Ռեմբրանդտին. նրա կյանքի երկրորդ շրջանի ինքնանկարները լրիվ հոգեվիճակներ են: Այդ ինքնանկարներում մենք տեսնում ենք, որ նրա որդին է մահացել, հետո՝ առաջին կինը, երկրորդը, որ ինքն աղքատության մեջ է, տեսնում ենք նրան մենակ եւ այդ մենության մեջ այնքան վեհ, որովհետեւ ինքը լավ գիտի, թե իր արվեստն ինչքան մեծ է եւ հզոր:

- Մարդուն ի՞նչն է խանգարում ապրել:

- Գիտե՞ք, ամենավատ բանը ինչն է աշխարհում, որ խանգարում է մարդուն ապրել, արարել՝ անորոշությունը: Ցանկացած հարցում անորոշությունն ահավոր է, այն վտանգավոր է թե անհատի եւ թե ազգի համար:

Սոնա ԱՂԱՄՅԱՆ